բաւի, սկսում է նուազել ու վերացուիլ ժողովրդի սովորութեան իրաւունքից և տեղի տալ գնման սովորութեանը։

Հարսի գնումը, որ պէտք է ասած, գոյութիւն է ունեցել նոյնպէս շատ հին ժամանակներից 'ի վեր, գրեթէ առևանգման հետ զուգընթաց, սկզբում միանգամայն այլ նշանակութիւն է ունեցել։ Նա ծառայել է իբրև մի փրկանք, որ վճարուել է աղջի կողմից աղջկայ տէրերին, որպէսզի մի կողմից՝ ծածկուի այն վնասը, որ կրում էին հարսի ծնողները, զրկուելով աշխատաւոր ձեռքերից և միւս կողմից՝ հատուցանուի աղջիկ փախցնելիս վերջինիս ծնողներին ու ազգականներին հասցրած տոհմային վիրաւորանքը։ Սակայն երբ առևանգումն անողոք արգելումների շնորհիւ նուազել է, գնումն ընդհակառակն աւելի և աւելի զարգանալով, սկսել է միանգամայն տիրապետող, ինքնուրոյն մի եղանակ դառնալ ամուսնութեան հարցում։

Հայոց մէջ, յիրաւի, գոյութիւն է ունեցել և այժմ էլ գոյութիւն ունի, քիչ թէ շատ փոփոխուած եղանակներով, հարսի գնումը։ Մի կողմը թողած պատմական ազգ տեղեկութիւնները, արդի ժողովրդական հարսանեաց սովորութիւնների մէջ, գոնէ այն տեղերի վերաբերմամբ, ուր գնումն արդէն վերացել է, նկատում ենք հետքեր, որոնց սիմբոլական ձևերը յիշեցնում են երբեմն տիրապետող գնման գործողութիւնը։

Թէ պատմական Հայաստանում տարածուած էր գընումն, իբրև մի իրաւաբանական երևոյթ, դա մեզ յայտնի է Բիւզանդական կայսր Յուստինիանոսի նշանաւոր XXI Novella-ից—«De Armeniis, ut et illi per omnia Romanorum leges sequantur», որով 536 թուից սկսած Հայաստանում մուծուում էր 'ի գործադրութիւն ընդհանուր Հռոմէական իրաւունքը։ Այս շրջաբերականի մէջ հռոմէական կայսրը մասնաւորապէս է անում, որ հայերը շատ ստոր են դասում կանանց և թէ Հայաստանում տեղ սովորութիւն կայ՝ այն է—գնել հարս ամուսնութեան համար, որպիսի գործողութիւնն ըստ հռոմէական իրաւունքի այսուհետև

Հայ մատենագրության թուանշային գրադարան